ԱՆՆԱ ՄԱՐԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս,
anna.m.s@inbox.ru
ORCID ID: 0009-0005-2537-3107
DOI: 10.54503/978-5-8080-1557-9-339

ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ

Բանալի բառեր՝ *Զապել Եսայան, մեթոդ, միջավայր, իրականություն, տպավորություն, կերպար, ռեալիզմ:*

Ներածություն

Զապել Եսայանի գեղարվեստական ժառանգության գրական ուղղության պատկանելության առանձնահատկությունները բացահայտելու համար անհրաժեշտ է նախևառաջ ցույց տալ գրողի աշխարհընկալման ձևավորման ուղին:

«Կարմիր սուլթան» Աբդուլ Համիդ 2-րդի արյունոտ կառավարության տարիներին արևմտահայության դաժան ջարդերի տպավորությունները դեռ վաղ հասակից են հետք թողել գրողի մտածողության վրա. ինքնակենսագրության մեջ «Առաջին ծիլեր» խորագրված հատվածում տեսնում ենք՝ Զ. Եսայանը տարիների խորքից հստակ հիշում է աշակերտուհի գեղեցիկ Վերգինեի խոսքերը. «...Գավառներու մեջ թուրքերը կը կոտորեն հայերը, սվիններու ծայրը կը հանեն երեխաները, կանանց փորը կը ճեղքեն...»[1], անկեղծանում՝ «հոգիս լցվեցավ խառն և շփոթ զգացումներով»[2]: Ինչպես ինքն է խոստովանում՝ հայրենակիցների ցավը համապրելու սերմերը նետվել են հոգում և շարունակ ծիլեր տվել՝ դառնալու գրական-գեղարվեստական ժառանգության մեջ իրականության պատկերման արտահայտություններ:

---

[1] **Եսայան Զ.,** Ինքնակենսագրություն, «Սովետական գրականություն», Եր., 1979, սեպտեմբեր, թիվ 9, էջ 50:
[2] Նույն տեղում:

Զապել Եսայանի մտածողության ձևավորման հարցում մեծ ազդեցություն է թողել Սկյուտարի ս. Խաչ վարժարանի ուսուցիչ Մելքոն Կյուրճյանը, որը նրա գրական նախափորձերի առաջին քննադատներից է եղել: Վերջինս շարունակ սթափության կոչեր է արել, հայրենասիրության դասեր սերմանել մատաղ սերնդի հոգում: Զապել Եսայանը հիշում է. «Իր պատճառաբանությամբ հայ ժողովուրդը կը կեղեքվեր, որովհետև կորսնցուցած էր իր անկախությունը»[3]:

Եսայան գրողի աշխարհընկալման առանձնահատկությունների կազմավորման ճանապարհին անհրաժեշտ է կարևորել նաև հոր՝ Մկրտիչ Հովհաննիսյանի դերը. «Հայրս լրջորեն հսկած է, որ գրական ասպարեզին մեջ իմ առաջին նախաքայլերուս չի սայթաքիմ դեպի պոլսական թեթևամտության և սնամեջ ֆռազաբանության դյուրին ճամբաները»[4]:

Դեռ վաղ հասակից Զապել Եսայանն ունեցել է հայրենակիցների ցավը համապրելու խոր զգացում, սերտել հայրենասեր ուսուցչի դասերն ու հոր հոգածությամբ բռնել «մեծ ճամբու ճամբորդ»[5] դառնալու ուղին:

Կյանքի գեղարվեստականացման հիմնական գծերը Զապել Եսայանի ստեղծագործություններում

Զապել Եսայանի գրական նախամուտքը ազդարարվեց արձակ բանաստեղծություններով: Վաղ շրջանի փոքր կտավի գործերում («Երգ առ գիշեր» (1895), «Կույրը» (1895), «Չխաբող սերը» (1895), «Կարմիր ջաղացքը» (1897), «Անձնասպան տղաքներ» (1899), «Մահը» (1899), «Յաշմաքը» (1899), «Ուրվականը» (1899), «Մրցումը» (1903) և այլն) գրողն առաջնային համարեց անհատի ներաշխարհի հոգեբանական նուրբ գծերի ներկայացումը, խոր հույզերի պատկերումը: Զ. Եսայանը ներկան պատկերեց գորշ գուներանգներով: «Երգ առ գիշեր»-ում իր սիրելի վերջալույսը մարելու հոռետեսական հույզերով համակված՝ խաղարկեց սևի գերակշռությունը՝ «սեւ քղանցքներովդ», «սեւ թեւերուդ»,

[3] Նույն տեղում, էջ 55:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 57:

«սեւաթոյր մթնոլորտիդ», «սեւութիւնդ»[6]: Երազային հեռուների որոնումներում ներկայացավ գրողը. «Սեւ թեւերուդ վրայ առած՝ հեռո՛ւն տար անոնք, որ կեանքէն ուժասպառ են եղած. քու զովութեանդ մէջ քնացուր անոնք անուշ երաժշտութիւններովդ, թող քանի մը ժամ հալի՛ն անոնց հոգերը քու սեւաթոյր մթնոլորտիդ մէջ»[7]: «Տենչանք մը» խորագրով արձակ բանաստեղծության մեջ տեսնում ենք՝ նույն «սեւին խորհուրդ»ն է, որի հանրանկարին հեղինակը կրկին խոստովանում է. «Ու միշտ ես՝ նաւակիս մէջ, խոկմունքներովս հոգիացած, շարունակէի քալել, ու նաւակս երբեք ափունքի մը չկապուէր, եւ սեւ էակներու թափօր մը զիս երազուած աշխարհ մը տանէին, ուր չհասնէինք երբեք»[8]:

Զապել Եսայանի վաղ շրջանի գործերում առանձնանում է 1898 թվականին տպագրված «Կարմիր ջաղացքը» խորագրով արձակ բանաստեղծությունը, ուր տեսնում ենք՝ շրջապատող արյունալի իրադարձությունները գրողին օտարում են իրականությունից. «...Թախծալի ներշնչումներու մէջ հոգիս առկախուած՝ պատրանքի աշխարհներու ծոցը կը մղուէի»[9], Եսայանն ահազանգում է. «Ամեն բան սեւ էր հոն...»[10], այնուհետև ընդգծում. «...Պատառ մը սեւ եղած էի ես ալ»[11]: Լիրիկական տրամադրություններին տրվելուն է ընդառաջ գնում հեղինակն իր գրական նախաքայլերին, պատճառը. «Բայց դժվար էր այդ ժամանակներու մեջ երիտասարդներու համար ամփոփվիլ և հետևել լուրջ ուսմունքի»[12]:

1903 թ. տպագրվում է Զապել Եսայանի անդրանիկ վեպը «Սպասման սրահին մեջ» խորագրով: Մեկնարկը հաջողված էր, աստիճանաբար հրատարակվում են գրողի լայն կտավի մեծարժեք գործերը: Վիպական ժանրում Զ. Եսայանը գտնում է իր հաստատուն տեղը. կարևորում է ժանրի ընձեռած՝ կյանքն առավել ամբողջական պատկերելու հնարավորությունը. «Գրական ժանրերի մեջ ընտրել եմ վեպը, վոր իմ

---

[6] Տե՛ս՝ **Յովհաննէսեան Զ.,** Երգ առ գիշեր, «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895, 1 Մարտ, թիւ 1, էջ 17:
[7] Նույն տեղում:
[8] **Եսայեան Զ.,** Տենչանք մը, «Լոյս», Կ. Պոլիս, 1908, 12 Ապրիլ, թիւ 16, էջ 528:
[9] **Յովհաննէսեան Զ.,** Կարմիր ջաղացքը, «Անահիտ», Բարիզ, 1898, Նոյեմբեր, թիւ 1, էջ 40:
[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում, էջ 41:
[12] **Եսայան Զ.,** Ինքնակենսագրություն, էջ 73:

կարծիքով արձակ գրականության մեջ ամենից ավելի ամբողջական կերպով վերարտադրում ե կյանքը»[13]:

Սևակ Արզումանյանը Զապել Եսայանի գրական մեթոդի շուրջ դիտարկումներում նկատում է. «Հնարավոր չէ որոշակի սահմանազատել, թե որտեղ է վերջանում նրա ռեալիզմը, որտեղից սկիզբ առնում ռոմանտիզմը: Երկու կողմերին էլ գրողը դիմել է հավասարապես»[14]: Իհարկե, գրողի ստեղծագործություններում ռոմանտիկական տարրերը հաճախ են զգացվում, սակավ, բայց առկա են նաև սիմվոլիստական, նատուրալիստական որոշ երանգներ, սակայն ընդհանրության մեջ, արձանագրենք, Զ. Եսայանը ռեալիստ գրող է. ապացույցը նրա թողած գրական հարուստ ժառանգությունն է:

Դեռևս 1903 թ. գրված հոդվածներից մեկում Զ. Եսայանը բարձր է գնահատում Բալզակի կին կերպարների «գերազանցապէս իրական եւ կեանքով բաբախուն» լինելը, ընդգծում. «Մարդկային Կատակերգութեան (La Comédie Humaine) ստուար էջերուն մէջ, ուր հեգնութիւնը ցաւի կը փոխուի ու այդ ոսկիէ տողերուն մէջ վերջապէս, կը յայտնուի իրապաշտութիւնը՝ րոմանթիք ազդեցութեան տակ դեռ երազող միտքերուն՝ Պալզաք առաջիններէն մէկը եղած է իրականութիւնը իր ցաւերով եւ նեխութիւններով առանց շպարումի դիմագրաւելու»[15]: Գրողը նշում է, որ չնայած որոշ ռոմանտիկ տարրերի՝ Բալզակի կերպարները իրական կյանքի զգացումների արտահայտիչն են, նրա վերլուծությունները «իրական կեանքի վրդովուն ճչտութիւնը» ունեն[16]:

Թեև 1905 թվականին տպագրված հոդվածներից մեկում Զ. Եսայանը գրել է. «…Գրագէտը կամ բանաստեղծը իր պարտքը կատարած է արդէն մարդկութեան, երբ շնորհը ըրած է գեղեցիկ գործ մը արտադրելու եւ հոգիները դղրդելու գեղեցիկին յուզմունքովը»[17], սակայն նրա հա-

---

[13] **Եսայան Զ.,** Ինչպես եմ գրում կամ ինչպես եմ ուզում գրել, «Գրական սերունդ», Եր., 1934, նոյեմբեր / դեկտեմբեր, թիվ 6–7, էջ 43:

[14] **Արզումանյան Ս.,** Զապել Եսայան (կյանքը և գործը), Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 67:

[15] **Եսայեան Զ.,** Պալզաքի վէպերը եւ իր կնոջ տպարները, «Ծաղիկ», 1903, 19 Յուլիս, թիւ 25, էջ 293:

[16] Տե՛ս՝ **Եսայեան Զ.,** Պալզաքի կնոջ տպարները, «Ծաղիկ», 1903, 23 Օգոստոս, թիւ 30, էջ 353:

[17] **Եսայեան Զ.,** Օրագրող եւ գրագէտ, «Մասիս», Կ. Պոլիս, 1905, 4 յունիս, թիւ 15, էջ 227:

մար առաջնայինը իր շուրջը կատարվող իրադարձություններին էին. Զ. Եսայանի գրական ժառանգությունն է հավաստում՝ չէր անտեսում շրջապատող իրականությունն ու գնում «արվեստը արվեստի համար» սկզբունքի հետևից:

Այսպես. հեղինակն ուրույն տեղ է հատկացրել 20-րդ դարասկզբի ուսանողության կյանքի անդրադարձին: «Սպասման սրահին մեջ» անդրանիկ վեպում պատկերել է փարիզյան միջավայրում նախընտրած մասնագիտությամբ անհատների կյանքի ողբերգական ընթացքը:

Զապել Եսայանը նկարչի ու գրողի՝ պատկերաստեղծման-կերպարաստեղծման առնչությունների շուրջ գրել է. «Ինչպես նկարիչը, վոր իր կոմպոզիցիայի համար պետք ունի իր իդեան արտահայտող մոդելների, կենդանի մարդուց, այնպես և վեպի հերոսների համար ինձ անհրաժեշտ են մոդելներ, վորոնք միշտ վերցնում եմ իրական կյանքից»[18]: Իսկ թե ինչքանով է ստացվել կյանքից վերցված մոդելներին վիպական տարածքում գեղարվեստորեն ներկայացնելը, բավական է միայն հիշատակել «Կեղծ հանճարներ» վեպը, ուր 20-րդ դարասկզբի հայ մտավորականները գրողի հմուտ գեղարվեստականացմամբ դարձել են ընդգծված խառնվածք ունեցող կերպարներ: Ուշագրավ է, որ վերոնշյալ վեպում Զապել Եսայանն արտահայտել է իր դիրքորոշումը Տաճատ Չարըքյանի՝ Ինտրայի սիմվոլիստական կերտվածքով ներաշխարհի վերաբերյալ. «…Իր մանուածապատ մտքովը միջոցը չէր գտնար այս ճշմարիտ եւ ուժգին դժբախտութիւնը արտայայտող մէկ քանի պարզ եւ պատշաճ բառեր գտնալ. երբ գրածը կարդաց, ամէնքն ալ գանգատեցան: Խնդիրը գրականութիւն ընելու վրայ չէ, հիմա, ջանայիր պարզ ու բարի ըլլալ»[19]: Խոսքերի ենթատեքստում կարող ենք գտնել ոչ պատահական համընկնումներ. Մանուկը, ում մահվան լուրը պետք է մորը հայտնեին ուսանողները, Զապել Եսայանի համար «անտեսուած, չհասկցուած, տառապագին» հայ ուսանողության խորհրդանիշն էր, գրողն առաջ էր քաշում նրա կարգավիճակի գույժը փոխանցելու կարևորությունը: Գրողի համար առավել նախընտրելի էր Բարսեղ Սարգիսյանի պարզ ու հստակ խոսքը. «Երբ Բարսեղ նամակը գրեց ու կարդաց, ամէնքն ալ երկիւղածութեամբ մտիկ ըրին ու զգացին որ անդին Կէտիկ-

[18] **Եսայան Զ.,** Ինչպես եմ գրում կամ ինչպես եմ ուզում գրել, էջ 46:
[19] **Եսայեան Զ.,** Կեղծ հանճարներ, Ստանպուլ, «Արաս» հրատ., 2019, էջ 160:

փաշայի մէջ տարաբախտ մայրը այս տողերը կարդալով ճշմարիտ զգացումը պիտի ունենայ իր սեփական զաւկին վերջին րոպէներուն»[20]:

Մտավորական-հասարակություն կոնֆլիկտը հստակ պատկերում է ստանում «Սկյուտարի վերջալույսներ» վիպակում, ուր Զ. Եսայանն արձանագրում է շրջապատող գեղեցկությունները, բայց և ընդվզում իրականության թերի կողմերի դեմ: Այստեղ աստիճանաբար կերպավորվում է հայրենիքի հանդեպ սրտացավ վերաբերմունք տածող անհատը:

«Հլուները և ըմբոստները» վիպակում Զ. Եսայանը քննադատում է անմիասնականությունն ու հլությունը, պատմական իրադարձությունների թոհուբոհում ցույց տալիս մարդու՝ ազատության, հավասարության, եղբայրության համար պայքարի ցանկությունը, քայլ առ քայլ պատկերում՝ ինչպիսի փորձեր էր անում «արյունոտ սուլթան» Աբդուլ Համիդ 2-րդը հայերին շարունակական կեղեքումների միջոցով հլու դարձնելու ճանապարհին:

«Շնորհքով մարդիկ» վիպակում հեղինակը ներկայացնում է 19-րդ դարավերջի ամիրաների կեղծ միջավայրը: Իհա՛րկե, այն չենք կարող համարել Զ. Եսայանի «ռեալիստական-հոգեբանական արձակի գլուխգործոցներից» մեկը[21], ինչպես կարծում է Ս. Արզումանյանը, սակայն վիպակը հետաքրքրաշարժ է որոշ կերպարների հոգեբանության պատկերման առումով, արժեքավոր՝ ներկայացված միջավայրի մթնոլորտին հարող որոշ կողմերի քննության տեսանկյունից:

Զ. Եսայանի՝ իրականության ռեալիստական արտացոլման վառ արտահայտությունն է 1911 թ. տպագրված «Ավերակներուն մեջ» վավերապատումը: Այս գործով Զ. Եսայանը համալրեց շարքը հայ մտավորականների (Սուրեն Պարթևյան, Սիամանթո, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ), որոնք արձագանքեցին Ադանայի կոտորածների մեծ ողբերգությանը, իր վկայություններով փոխանցեց հոգեվիճակն անհատների, որոնք զոհն էին դարձել զանգվածային անարդարությունների, ոճիրների:

Ոչ միայն պատմական, այլև համամարդկային և գեղարվեստական մեծ արժեք ունի Զ. Եսայանի «Հոգիս աքսորյալ» վիպակը: Այստեղ

---

[20] Նույն տեղում, էջ 160–161:

[21] Տե՛ս՝ **Արզումանյան Ս.,** Զապել Եսայան (կյանքը և գործը), էջ 109:

սյուժետային զարգացումներն իրենց տեղն են զիջում քաղաքական բարդ իրավիճակում իրենց գործունեությունը ծավալող մտավորական կերպարների կյանքից դրվագների պատկերմանը: Գրողը ցույց է տալիս նրանց դժվար ուղին քաղաքականությամբ շնչող մթնոլորտում, ընդգծում հոգեկան ազատության և կաշկանդող պատյանները կոտրելու ուղին՝ որպես արվեստի իրական գործ ստեղծելու նախապայման:

Զ. Եսայանի ստեղծագործության մեջ առանձնակի ուսումնասիրության դաշտ են բացում կին կերպարները՝ իրենց ներաշխարհի մանրազնին պատկերմամբ («Մոլորումը», «Անձկության ժամեր», «Եվփիմե», «Արգելքը» «Վերջին բաժակը» և «Հոգիս աքսորյալ»): Եթե «Մոլորումը», «Անձկության ժամեր» վիպակներում գերիշխող են կերպարների հույզերի պատկերումը, նրանց՝ իրականությունից և միջավայրից կտրված լինելը, ապա «Եվփիմե» վիպակով գրողը վերադառնում է ռեալիստական սկզբունքներով կյանքի գեղարվեստականացմանը. միջավայրն ու սոցիալական կարգավիճակն են կանխորոշում մարդկային ճակատագրերը:

Զ. Եսայանի՝ հայ կին մտավորականի խառնվածքը, բնավորությունը, ձգտումները, հիշողության և մտածողության առանձնահատկությունները, այն է՝ ինքնակերպավորումը, բյուրեղացվում են «Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպում: Այստեղ հստակ պատկերում են ստանում միջավայրը, բարքերն ու մարդիկ:

Գրողի խորհրդային կողմնորոշման պատճառ-հիմքերը խտացվում են «Նահանջող ուժերը» և «Բարպա Խաչիկ» վեպերում: Հանուն ցեղասպանություն տեսած, բնաջնջման վտանգի տակ կանգնած հայության բարօրության, խաղաղ զարգացման՝ Զ. Եսայանն ըստ էության թվացյալ մոռացության է մատնում ազատասեր ժողովրդի մեծ հույսերը, երազանքները: Երկու հակադիր թևերի պայքարում հատուկենտ, բայց և դիպուկ խոստովանված ճշմարտություններով գրողը կասկածի տակ է դնում իր կողմից առաջ քաշված նոր գաղափարները, առավել ընդգծում հայ մտավորականի համար անկախության երազի զոհաբերման ողբերգականությունը:

Ռեալիզմի սկզբունքներով է կերտված նաև «Կրակե շապիկ» վիպակը, որը ներկայացնում է թուրքական տիրապետության տակ ապրող աշխատավոր մարդկանց սոցիալական թշվառ, վտանգներով լի առօրյան:

Ռեալիստ գրող Ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանը նկատում էր. «Այո՛, գրականությունը հայելի չէ լոկ...»[22], ռեալիզմի վարպետ Շիրվանզադեն ընդգծում. «Ամենառեալական գրողը շեղվում է ֆոտոգրաֆիական ճշտությունից, ամենառեալական տիպերը գրականության մեջ տարբերվում են կյանքի տված տիպերից»[23]: Նույն կերպ էր խորհում Զապել Եսայանը. ինչքան էլ նյութը վերցնում էր իրականությունից, միևնույն է, այն եսայանական կնիքն ուներ իր վրա. հստակ գիտակցում էր՝ իրականության գեղարվեստական արտացոլումը չպետք է լինի լոկ «լուսանկարչական փոխառություն». «Իրականությունը մեզ ներշնչում է, իրականությունը մեզ տալիս է նյութեր մեր յերկի համար ատաղձ, բայց ստեղծագործական երկար պրոցեսից հետո է, վոր այդ բոլորը վերածվում են գեղարվեստական երկի»[24]: Զապել Եսայանը կարևորում էր վառ երևակայությունը, նկարչական զգացումը, իսկ կերպարները հիմնականում վերցնում էր կյանքից, ավելին, նրա գործերում հստակ ճանաչելի են մի շարք մտավորականներ՝ Տիրան Չրաքյան, Սուրեն Պարթևյան, Արտաշես Հարությունյան, Տիգրան Եսայան, Սիամանթո, Վահրամ Սվաճյան, Արշակ Չոպանյան և այլք:

Իհարկե, նկատենք՝ Զապել Եսայանի ստեղծագործության մեջ մեծ տեղ են զբաղեցնում գործերը, ուր նախատիպը հենց ինքը՝ հեղինակն է, ում մեջ արտացոլվում են իր գաղափարներն ու ձգտումները, արդար բողոքը՝ ուղղված ժամանակին ու միջավայրին, սերը՝ ուղղված բնությանը, հայրենիքին, սակայն, այսքանով հանդերձ, գրողը սուբյեկտիվության տարրը հասցնում է նվազագույնի. կերպարը երբեք չի դառնում զուտ գրողի խոսափող, միջավայրում ունի ինքնուրույն զարգացում, առաջնորդող չէ, ոչ էլ իդեալականացված՝ զերծ մարդուն հատուկ սխալներից: Հիշենք 1917-ին «Գործ» ամսագրում հրատարակված «Վերջին բաժակը» վիպակը, ուր Զ. Եսայանը բացեց իր հոգու նուրբ անկյունները: «Մարդիկ կան որոնց կեանքին այս կամ այն ժամուն հո-

---

[22] **Թումանյան Հովհ.,** Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հտ. 7, Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 1995, էջ 32:

[23] **Շիրվանզադե,** Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 10, Եր., Հայպետհրատ, 1962, էջ 117:

[24] **Եսայան Զ.,** Ինչպես եմ գրում կամ ինչպես եմ ուզում գրել, էջ 45:

գին յայտնուած է ու տէր դարձած կացութեան…»[25],– նկատեց Զ. Եսայանն ու խիզախեց անկեղծանալ իր կյանքի վեպի էջերին:

Չմոռանանք ընդգծել՝ Զ. Եսայանի գրական դավանանքը Պետրոս Դուրյանն էր, որի գրական ժառանգությունն ամբողջության մեջ դիտարկվում է ռոմանտիզմի տիրույթում. նա բացեց իր հոգու գողտրիկ անկյունները, վարպետորեն թղթին հանձնեց ներաշխարհի լուռ փոթորկումները՝ ներկայի, իրականության և երազի բախման հանրանկարին պատկերելով արվեստագետի նուրբ հոգին: Դուրյանի պոեզիայի ռոմանտիկական տարրերը խոր հետք թողեցին Եսայան գրողի մտածողության մեջ, պատահական չէ, որ «Սկյուտարի վերջալույսներ» վիպակում հեղինակ-հերոսուհին, դիմելով սիրելի բանաստեղծին, խոստովանում է. «Եթէ իրաւ է որ բան մը մնացած է քեզմէ, եթէ քու աճիւնէդ անկորնչելի մաս մը ազատած է հողին բռնաւոր քայքայումէն, եթէ քեզմէ շունչ մը, զգացում մը կը դեգերի հոդ, թող գայ իմ էութեանս հետ խառնուի, ու իմ աչքովս տեսնայ, իմ ականջովս լսէ, դողդոջուն սաղարթներուն զմրուխտը եւ թռչուններուն երգերը ու բոլոր այն բաները, որոնցմէ առանց յագենալու եւ կարօտով հեռացար…»[26]: Պ. Դուրյանի ռոմանտիկական մտածողության երակը, անկախ Զ. Եսայանի նախընտրած գրական ուղղության՝ ռեալիզմի, ստեղծագործելու ողջ ընթացքում մնաց գրողի կողմից կյանքի գեղարվեստականացման անբաժանելի մասը՝ առավել հարստացնելով ռեալիստական գործերը:

Դրսևորման բազմաձևությամբ ուրույն կերտվածք ունի Զ. Եսայանի գեղարվեստական մտածողությունը. հիմքում ունենալով ապրած տպավորությունները նույնքան խորությամբ ընթերցողին փոխանցելու ցանկությունը՝ իր վիպագրությունը հարուստ է հիշողությունների, զգացումների հարուստ պատկերներով, նկարչին հատուկ դիտողականությամբ բնության մեջ գրողը հստակ զանազանում է սովորական աչքին ոչ տեսանելի գեղեցկություններ, ստեղծում կենդանի կերպարներ՝ ընդգծված խառնվածքով:

---

[25] **Եսայեան Զ.,** Երկեր, Բ հատոր, Անթիլիաս, տպ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1987, էջ 60:

[26] **Եսայեան Զ.,** Սկիւտարի վերջալոյսներ եւ այլ գրութիւններ (1895–1905), Իսթանպուլ, Հրատարակութիւն թրքահայ ուսուցչաց հիմնարկի, 2009, էջ 62:

Եզրակացություններ

Զ. Եսայանը ռեալիստ գրող է, որն ունի իրականության գեղարվեստականացման ուրույն սկզբունքներ: Հեղինակը ընթերցողին է փոխանցում կյանքից փորձով ձեռք բերված ճշմարտությունները, կերպարակերտման ճանապարհին կարևորում ոչ միայն միջավայրի ազդեցության դերը, այլ նաև կերպարների հոգեբանական նրբագծերի պատկերումը:

Զ. Եսայանին բնորոշ է ռեալիստական մտածողությունը. գիտակցում էր՝ մտավորականի խոր հուզական ներաշխարհը պատկերելուց զատ պետք է նաև խորությամբ, մտավորականի սթափ հայացքով ներկայացնել իրականությունը, մանրամասն և հիմնավոր թափանցել խնդիրների հիմքերի բացահայտման շերտերը, հստակ պատկերել իրականությունն ու տալ դիպուկ բնորոշումներ:

АННА САРГСЯН

Кандидат филологических наук, преподаватель кафедры армянской литературы и методики ее преподавания имени Вачэ Партизуни (АГПУ имени Х. Абовяна)

ЛИТЕРАТУРНЫЙ МЕТОД ЗАПЕЛ ЕСАЯН

Резюме

Целью данной статьи является выявление литературного метода Запел Есаян. Определены следующие задачи: раскрыть особенности художественного мышления автора, основываясь как на тематических охватах, изображенных в ее произведениях, так и на определенных наблюдениях, высказанных в ее публицистических статьях, представить принципы художественного изображения действительности, артикулированные Запел Есаян.

В ходе исследования были применены следующие методы: сопоставление, абстрагирование, анализ, синтез.

З. Есаян является писателем-реалистом. Через свое литературное наследие автор доносит до читателя истины, приобретенные

жизненным опытом, подчеркивая не только роль влияния среды на пути создания персонажа, но и изображение психологических тонкостей персонажей.

Писательница акцентировала значимость принципов реалистического мышления: она осознавала, что помимо изображения глубокого эмоционального внутреннего мира интеллигента, не менее важно изображать действительность с равной глубиной и ясным взглядом, детально и обоснованно проникать в слои раскрытия сути проблем, изображать действительность и давать точные характеристики.

Ключевые слова: *Запель Есаян, метод, окружение, реальность, впечатление, образ, реализм.*

ANNA SARGSYAN

Doctor of Philology, Lecturer of Literature at
Chair of New and Modern Literature and its
Teaching Methods after Vache Partizuni (ASPU after Kh. Abovyan)

THE LITERARY METHOD OF ZAPEL YESAYAN

Abstract

The aim of this article is to reveal the literary method of Zapel Yesayan. The following issues have been identified: to unwrap the characteristics of the author's artistic thinking, based on both the thematic inclusions depicted in her works and certain observations raised in her journalistic articles, to present the principles of artistic representation of reality as articulated by Zapel Yesayan.

In the course of the study, the following methods were applied: comparison, abstraction, analysis, synthesis.

Z. Yesayan is a realist writer. With her literary heritage, the author conveys truths acquired through life experience to the reader, emphasizing not only the role of the environment's influence on the way

of a character creation but also the depiction of psychological nuances of the characters.

The writer highlighted the principles of realistic thought; she was aware that beyond depicting the profound emotional inner world of intellectual, it was equally important to represent reality with the same depth and clear perspective, to thoroughly penetrate and justify each layer in uncovering the essence of the issues, to portray reality and to provide accurate characterizations.

Keywords: *Zapel Yesayan, method, environment, reality, impression, character, realism.*